

ՉՈՎԱԲԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 Թ-Ի
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի համայնքի անդամներ, ավագանի, հրավիրվածներ, Ձեզ է ներկայացվում Չովաբեր համայնքի ղեկավարի 2011թ-ի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Անցած ժամանակահատվածում հրավիրվել է համայնքի ավագանու 12 նիստ, կայացվել է 40 որոշումներ:

Ավագանու կողմից կայացված որոշումները կատարվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 62 որոշում և 15 կարգադրություններ:

Հրավիրվել է համայնքի ժողովներ, որտեղ քննարկվել են համայնքին հուզող հարցերը:

Համայնքի ղեկավարի անունով ստացվել են 79 դիմումներ, որոնք ժամանակին ստացել են իրենց պատասխանները:

Այժմ ըստ բնագավառների իրականացված աշխատանքների մասին.

1. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Չովաբերի համայնքի 2011թ. տարեկան բյուջեն նախատեսված է եղել 27370.0 հազար դրամ: Փաստացի կատարվել է 27280.0 հազար դրամ, որից սեփական եկամուտները նախատեսված է եղել 5952.3 հազար դրամ: Կատարվել է 6162.3 հազար դրամ: Այսինքն կատարման տոկոսը կազմում է 103,5%:

Բոլոր հիմնական հարկատեսակների գծով տարեկան պլանը կատարվել է:

Ինչ վերաբերվում է 2011թ. բյուջեի ծախսային մասին, ապա ծախսերը կատարվել են խնայողաբար: Արդյունքում 2012թ. տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 3143969,80 դրամ:

Բյուջեի ծախսային մասը ավելի մանրամասը կներկայացվի ըստ բնագավառների: Միայն մի բան կարելի է ավելացնել, որ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղապետարանը որևէ պարտք չունի:

2. ԲԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոմունալ տնտեսության բնագավառում կարելի է առանձնացնել 3 հիմնական խնդիրներ.

1. խմելու ջուր
2. ոռոգման ջուր
3. սանիտարական մաքրություն և աղբահանություն

Խմելու ջրի անխափան մատակարարումը գյուղապետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում է: Ինչպես զիտեք ջուրը բնակչությանը տրվում է ըստ նախօրոք հաստատված գրաֆիկի, ժամերով: 2011թ.-ին խմելու ջրի ինչպես մայր ջրագծում, այնպես էլ ներքին ցանցում եղած վթարները ժամանակին վերացվել են: Լվացվել և ախտահանվել է օրվա կարգավորիչ ջրամբարը:

Այստեղ չլուծված խնդիր է մնում «Կոնսխագյորմագ» կոչվող հանդամասում գտնվող կապտաճի վերանորոգման խնդիրը :Մենք շնորհակալություն ենք հայտնում «Կարիտաս» միջազգային կազմակերպությանը, որի օգնությամբ և օժանդակությամբ, նաև գյուղապետարանի աջակցությամբ «Գյուլեր» կոչվող հանդամասում շուրջ 400զժ.մետր խողովակաշարի փոխելու խնդիրը ստացավ իր դրական լուծումը:Աշխատանքները ավարտելուց հետո ավելացավ ջրի քանակը և որակը:

Ոռոգման ջրի մատակարարումը տարեց տարի բարելավվում է, բայց դեռևս չի կարելի համարել կանոնակարգված: Այս ուղղությամբ «Հրազդան-ջուր» ընկերությունը մեծ աշխատանքներ ունի կատարելու:Համայնքում 2011թ. տարեկան բյուջեով նախատեսված է եղել կատարել աղբահանություն` և ապրիլ ամսից կատարվել է աղբահանություն:

2011թ.-ի ընթացքում ձեռք է բերվել համակարգչային սարքավորումներ 297.0 հազ.դրամ և 88.0 հազ.դրամ լուսանկարչական ապարատ:

2011թ.-ի ձեռք է բերվել ավտոկանգառ, որի համար ծախսվել է 600.0հազ.դրամ:

3. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Տեղական բյուջեի միջոցները դեռևս բավարար չեն ներհամայնքային ճանապարհները վերանորոգելու համար:

2012թ. տարեկան բյուջեով որոշակի վերանորոգման աշխատանքներ կնախատեսվի, բայց դրանք բավարար չի կարելի համարել: Համայնքի համար ամենացավոտ խնդիրը Ջովաբեր-Հրազդան ճանապարհատվածի ասֆալտապատումն էր, որը տարիներ շարունակ դառնում էր անանցանելի, ի ուրախություն բոլորիս ՀՀ Տրանսպորտի և Կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ»-ի կողմից շինարարական աշխատանքները կիրականացվեն նշված ժամկետում 12.12.2011թ-31.08.2012թ:

Համայնքում գործող առևտրի կետերին ժամանակին տրվել է համապատասխան թույլտվություններ և գանձվել է տեղական տուրքեր:

Համայնքի արարողությունների սրահում 2011թ-ին կատարվեց շուրջ 587.0 հազար դրամի ներդրում, գնվեց սպասքի առարկաներ, սեղան և նստարաններ ,որը դեռևս բավարար չէ սպասարկումը նորմալ կազմակերպելու համար:

2012թ.-ին այս բացը կլրացվի:

4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇ ԱԿՈՒՅԹ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի միջնակարգ դպրոցը գործում է իր բնականոն հունով: Արդեն մեզ համար սովորական է դարձել, որ ամեն տարի շրջանավարտների 50%-ից ավելին իրենց ուսումն են շարունակում պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դպրոցը համալրված է մանկավարժական կադրերով:

Այստեղ չլուծված խնդիր է մնում դպրոցի վերանորոգման հարցը:

Չովաբերի մսուր-մանկապարտեզ 2011թ.-ին, ինչպես նախորդ տարիներին, 1 խմբով, 30 երեխա, 5 ամիս ժամկետով վերագործարկվեց: Այստեղ խնդիր է մնում մսուր-մանկապարտեզի ամբողջովին հիմնանորոգման հարցը, որը թույլ կտա այն շահագործել շուրջտարի:

Չովաբերի մշակույթի տան և գրադարանի աշխատանքը տարեց-տարի բարելավվում է: 2011թ.-ին արևելյան մարզաձևի խմբակի հետ սկսեց գործել պարի խումբը, որտեղ ընդգրկված է շուրջ 30 երեխա: Համայնքում բոլոր տոները և հիշարժան օրերը նշվում են, կազմակերպվում են միջոցառումներ:

2011թ.-ի ընթացքում ամբողջովին վերանորոգվել է խաղասենյակը, ձեռք է բերվել թենիսի սեղան և նարդի:

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի տիպային երկհարկանի ամբուլատորիա, որը նախատեսված է 2 բժշկի համար, սակայն ընդամենը 1 ընտանեական բուժքույր է սպասարկում գյուղը, որը իմ կարծիքով անբավարար է: Ըստ գործող կարգի ամիսը 1 անգամ համայնք է այցելում Դոմաշենի բժշկուհին: Բնակչության առողջապահական սպասարկումը ավելի բարվոք կլիներ, եթե տեղում աշխատեին համապատասխան մասնագետներ, չնայած ընտանեկան բուժքրոջ աշխատանքից դժգոհություններ չկան:

Սոցիալական ծառայության «Փարոս» համակարգից օգտվում են 45 ընտանիք: Անապահովության գնահատման մեխանիզմից կախված դեռևս համայնքում կան ընտանիքներ, որոնք սոցիալապես անապահով են, բայց չեն օգտվում այդ համակարգից:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետարանը տեղական բյուջեի հաշվին որոշակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նման ընտանիքներին: Այն ընտանիքներին, որտեղ մահ կամ ծնունդ է գրանցվում տրվում է օգնություն:

Գյուղում ցավոտ խնդիր է մնում գործազրկությունը:

6. Գ Յ ՈՒ Ղ Ա Տ Ն Տ Ե Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ի Ն

Գյուղատնտեսության բնագավառում 2010թ.-ին ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մեզ մոտ գոհացուցիչ ցուցանիշներ չկա, գյուղի վարելահողերի միայն 40%-ն է մշակվում: Գյուղում հիմնականում մշակվում են հացահատիկ և կարտոֆիլ, որոնց սերմերը սորտաթարմացման կարիք ունեն: Նույն վիճակն է նաև անասնապահության մեջ, գնալով պակասում է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը:

Ինչպես ամեն տարի գյուղապետարանը 2011թ-ին օգնեց գյուղացիներին ազոտական պարարտանյութ ձեռք բերելու գործում:

Ինչպես գիտեք գյուղը ընդգրկվեց աշնանացան ցորենի և զարնանացան գարու սորտերի փոխանակման ծրագրում, այդ թվում աշնանացան ցորեն տրվեց 60 ընտանիքի, զարնանացան գարի 72 ընտանիքի:

Անասնաբուժական ծառայության ոլորտում պետ պատվերի շրջանակում իրականացվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները:

Ամփոփելով հաշվետվությունը կուզերի ավելացնել, որ 2011թ. –ի ձեռքբերումներում զգալի են համայնքի ավազանու ներդրումները գյուղի առջև ծառայած խնդիրների լուծման գործում

Հիմնական խնդիրները

1. Զովաբեր – Հրազդան ճանապարհի շինարարություն
2. Մսուր –մանկապարտեզի հիմնանորոգում
3. Մշակույթի տան հիմնանորոգում
4. Դպրոցի հիմնանորոգում